զանեանց։ Բարեկարգիչ եկեղեցեաց՝ Իսահակ Քահանայ Պօղոսեանց։
Ի Ղզլար բարեկարգիչ եկեղեցեաց Գաբրիել Քահանայ Ցուրիայեանց։

Է. ԿԱՐՈՒՑ ԹԵՄ։

Կառավարիչ Թեմի Գրիգորիս Եպիսկոպոս Ադամանեան։
Վանահարք. Անուշ Ս. Կաթուղիկէի՝ Ներսէս Վարդապետ Տիգրանեան, Խծկոնից (Բէշքիլիսա) Ս. Սարգսի՝ Յարութիւն Վարդապետ Մանուկեան, Հռոմոսի Ս. Յովհաննու՝ Բաղդասար Վարդապետ Բայդաղտարեան։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ։

Գանձակեցի եղբարք Իսահակեանք ի յիշատակ իւրեանց հանգուցեալ Բագարատ եղբօր նուիրել են երեք հարիւր ռուբլի, մի հարիւրը Մայր Աթոռոյս ճեմարանին, մի հարիւրը տեղւոյն աղքատանոցին, և մի հարիւրը տեղւոյն Ս. Յովհաննէս Եկեղեցւոյն։ Աղօթումենք առ Աստուած որ յիշեալ եղբարց նուէրը ի հաճոյս իւր ընդունելով՝ ընդ սուրբս և ընդ սիրելիս իւր դասէ զՀոգի հանգուցելոյն և վշտացեալ Իսահակեան եղբարց սրտերը մխիթարէ վարձատրելով ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ բիւր բարութեամբ։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ԴԻՒԱՆ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ.

Վեհափառ Հայրապետեան Աղգիս տեսնելով Շամախւոյ Թեմի Կառավարիչ Թադէոս Եպիսկոպոսի երկարամեայ հաւատարիմ ծառայութիւնքն իւր պաշտօնի մէջ և նորա զանազան անձնական բարեմասնութիւնքն՝ հաճեցաւ 1885 ամի Նոյեմ. 24, թ. 163 կոնդակով շնորհել նորին Սրբազնութեան Արքեպիսկոպոսութեան Տիտղոս։

Ըստ միջնորդութեան Էջմիածնայ Սինոդի Վեհափառ Հայրապետեան իմանալով Պ. Ակէքսանդր Թայիրեանցի ջանքը, որ յետ շինութեան Կոճորի Եկեղեցւոյն ամենայն ջանք և միջոց գործ է դնում վայելչացնել նոյն եկեղեցին զանազան շինութիւններով, հաճեցաւ 1885 ամի Դեկտեմ. 11, թ. 217 կոնդակով յայտնել իւր գոհունակութիւնն վասն ջերմեռանդ ծառայութեանն և օրհնել բարեսէր պարոնին ընտանեօք հանդերձ։

Վեհափառ Հայրապետ Ազգիս ըստ միջնորդորդութեան Ի Պոլսոյ Վեհաշնորհ Պատրիարք Տէր Յարութիւն Սրբազան Արքեպիսկոպոսի, Պատրիարքական Փոխանորդ Դէորգ Վ. Վարդապետ Ռուսճուգլեանի արդիւնաւոր և հաւատարիմ ծառայութեանց համար հաճեցաւ 1885 ամի Դեկտեմ. 11, թ. 219 կոնդակով շնորհել նորին արժանապատուութեան իրաւունք կրելոյ վարդապետական ականակաւոր խաչ։

—

Վեհափառ Հայրապետն ընդունելով Մոզդոկեցի Պ. Պետրոս Սահակեան Գեանջումեանցի և նորա բարեպաշտ Նունէ ամուսնուց այն ընծայագիրն, որով յիշեալ բարեսէր Պարոնը՝ տեղւոյն Ս. Սարգիսեանց Եկեղեցւոյ որահում Օրիորդական Դպրոցի քարակերտ տան շինութիւնը յաւարտ հասուցանելով՝ խնդրումէ յատկացուցանել ի մշանջենաւոր սեպհականութիւն Եկեղեցւոյն և հաճել վերակոչել յանուն որբոյ կուսին՝ Նունիայ. այս տեսակ բարեպաշտ նուիրաբերութեան համար Նորին Օծութիւնն հաճեցաւ 1885 ամի Դեկտեմ. 17, թ. 225 օրհնութեան կոնդակ շնորհել և հրամայել Սինոդին ընդունել բարեսէր Պարոնի նուիրատուութիւնն ի շարս եկեղեցական կալուածոց։

—

Վեհափառ Հայրապետ Ազգիս Տփխիսու Ներսիսեան Հոգ. Դպրոցի Հոգաբարձութեան միջնորդական յայտարարութեան համաձայն հաճեցաւ 1886 ամի Յունվար 7, թ. 15 կոնդակով հաստատել Պ. Արշակ Նահապետեանցին Տեսուչ նոյն Դպրանոցի։

—

Վեհափառ Հայրապետն Ազգիս, Որ ընդ այլ և այլ հոգածութեանց գլխաւոր առարկայ համարի և ձեմարան Աֆթառոյս, ուրանօր կամենալով առաւել և ևս զօրացուցանել կրօնական զարգացումն աշակերտաց, հաճեցաւ 1886 ամի Յունվարի 11, թ. 26 կոնդակով Սինոդի Անդամ Դեր. Մեսրոպ Եպիսկոպոսին նշանակել Վերատեսուչ ձեմարանի տալով նորան և իրաւունք հսկելոյ ի վերայ ներքին և արտաքին բարեկարգութեանց ի վերայ վարուց և բարուց աշակերտաց իսկ Պ. Նիկողայոս Խոսրովեանցի վերայ թողլով Տեսչութիւնը ըստ ուսումնականին լիակատար իրաւամբ։